



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

<< 23 >> << 01 >> 2017թ

Գ. Արտաշար

Արմավիրի մարզի Արտաշար համայնքի ղեկավարի 2016 թվականի աշխատանքային գործունեության վերաբերյալ

Հաշվետու ժողովին մատնակցում էին ավագանու անդամները, գյուղապետարանի աշխատակիցները, դպրոցի ուսուցիչներ, համայնքի բնակիչները և Արմավիրի մարզի մարզպետի տեղակալ Գագիկ Գաբրիելյանը:

Զեկույցով հանդես եկավ համայնքի ղեկավար Մ. Օհանյանը, որը ներկայացրեց 2016 թվականի ընթացքում իր կողմից կատարված աշխատանքները: Նաև նշեմ, որ 2016 թվականի ընթացքում ավագանին հրավիրել է 13 նիստ, որի ընթացքում քննարկվել են համայնքին հուզող հարցեր, որանց վերաբերյալ ընդունված որոշումների մասին իրազեկվել է համայնքի բնակչությանը: Գյուղապետարանը ստացել է 71 շրջաբերական, ուղարկել 64 գրություն և քաղաքացիներին է տրամադրել 287 տեղեկանք:

1. Գյուղատնտեսության բնագավառ.

Գարնանը գյուղատնտեսական աշխատանքների մեկնարկի ժամանակ գյետ է ներկրվել 13 հազար լիտր կատաավարության կողմից հատկացված դիզելային վառելանյութ և բաժանվել հողօգտագործողներին, սևուցման աշխատանքները կատարելու համար, նաև գյուղ է ներկրվել 1100 պարկ ազատական պարարտանյութ և բաժանվել ըստ հողօգտագործողների ներկայացրած պահանջարկի:

Ոռոգման ջրով հողօգտագործողներին ապահովելու նպատակով գյուղապետարանը իր անոնիջական աջակցությունն է ցուցաբերել ՋՕԸ-ին անխափան ոռոգման ջրով հողօգտագործողներին ապահովելու համար: 2016 թվականի մայիսի 23-ին տեղացած կարկուտի պատճառով 60-80% վնասվեց համայնքի ավրոցը ցանքատարածքները, գյուղացիական տնտեսություններին պատճառելով մեծ վնաս, բայց նրանց ջանքերի շնորհիվ կատարվեց վերականգնողական աշխատանքներ առատ բերք ստանալու նպատակով և բերքատվությունը հասցվեց միջինից բարձր բերքի: 2016 թվականի սեփական եկամտուտների հավաքագրումը կազմում է 69%, հավաքագրման ցածր ցուցանիշի պատճառը պայմանավորված է կարկուտի վնասի հետ, որը առաջացրեց տնտեսություններին ֆինանսական մեծ վնաս:

2. Կենցաղ սպասարկման բնագավառ.

2016 թվականի ընթացքում տնտեսությունների կենցաղային պայմանները բարելավելու նպատակով կատարվել է խմելու ջրի անխափան մատակարարում միջինը 15 ժամյա աշխատանքային ռեժիմով, գյուղապետարանի և սանիտար կայանի կնքած պայմանագրի համաձայն պարբերաբար խմելու ջուրը ենթարկվել է ստուգումների: Վերակառուցվել է 900/մ փողոցային լուսավորություն և երեք փողոցներ ունեն լուսավորություն ,կառուցվել է բացօթյա երեք հանգստի տաղավարներ և տեղադրվել համայնքի մարդաշատ վայրերում, կատարվել է ճանապարհների ավագապատում և հարթեցում 21կ/մ: Կատարվել է աղբահանության աշխատանքներ մահար 4 անգամ և համայնքում աղբի կուտակումներ չկան:

3. Մշակույթի և սպորտի բնագավառ.

Համայնքուի մշակույթի տանը զարծում է սպորտային խմբակ և երեխաներին ավելի լավ պայմաներ պարապունքների անցկացնելու համար ապահովելու նպատակով փոխվել են մշակույթի տան դռները և պատուհանները տեղադրվել են եվրոպական արտադրության դռներ և պատուհաներ, ապահովվել ենք մարզական գույքով: Գյուղապետարանի աջակցությամբ երեխաները մասնակցել են 22 առաջնությանը և հաղթելով զրավել են բարձր տեղեր, իսկ Վրաստանում մասնակցել են Կովկասի առաջնությանը և մրցումներին մասնակցելու համար գյուղապետարանը ցոխցարեղելու է իր անմիջական աջակցությունը: Գյուղապետարանը սերտ համագործակցում է դպրոցի հետ, կազմակերպում է միջոցառումներ և միջոցառման մասնակից կրեդաներին հանձնվում է նվերներ: Կանանց միձագային օրվա կապակցությամբ թոշակառու կանանց և հաշմանդամ կանանց համար կազմակերպվել է տոնական միջոցառում և տոնի կապակցությամբ նրանց հանձնվել է նվերներ: Տարվում են աշխատանքներ մշակույթի և սպորտի զարգացման ուղղությամբ:

4. Սոցիալական բնագավառ.

Գյուղապետարանի անմիջական ուշադրության կենտրոնում են սոցիալապես անապահով ընտանիքները, հաշմանդամները և թոշակառուները: 2016 թվականի սոցիալապես անապահով 38 ընտանիք դիմել է դրամական օգնության խնդրանքով և գյուղապետարանը չներժելով նրանց խնդրանքը ավել է դրամական օգնություն: Ապրիլյան քառօրյա պատերազմի մասնակից 12 ժամկետային զինծառայողների ընտանիքներին 100 հազարական դրամ արամադրվել է որպես աջակցություն: Գյուղապետարանի օանքերի շնորհիվ <<Ղիակոնյա>> բարեգործական կազմակերպության կողմից 50 ընտանիք ամուսական մեկ փաթեթ ութ կիլոգրամ տարազությամբ սննդամթերք է ստանում, սոցիալապես անապահով 17 ընտանիք ստանում են ընտանեկան նպաստ, տարվում է աշխատանքներ բոլոր ուղղություններով գյուղի սոցիալական վիճակը բարելավելու նպատակով:

5. Համայնքի հիմնախնդիրները

1. Խմելու ջրի ցանցի նորացում
2. Ճանապարհների ասֆալտադատում
3. Մշակույթի տան վերանորոգում
4. Մանկապարտեզի շենքի կառուցում
5. Գյուղապետարանի շենքի կառուցում
6. Ոռոգման ցանցի կիսախողովակների կառուցում և խորքային հորերի վերագործարկում:

Արտաշարի գյուղապետարանը 2016 թվականի աշխատավարձի, սոց վճարումների և այլ ծառայությունների հետ կապված պարտքեր չունի:

Արտաշար համայնքի բնակիչները գյուղապետ Մ.Օհանյանի գլխավորությամբ իրենց խորին
երախտագիտությունն են հայտնում Հայաստանի Հանրապետության նախկին վարչապետ
Հ.Աբրահամյանին համայնքին երկու կարկուտի կայան և մեկ բեկառուս MT3 82.1 տրակտոր
հատկացնելու համար և Արմավիրի մարզպետ Պարոն Ա.Ղախրամանյանին համայնքի
հիմնախնդիրներին ուշադրություն դարձնելու և տեղացած կարկուտի ժամանակ համայնք
այցելելու և գյուղին աջակցելու համար:

ԱՐՏԱՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ



ՕԶԱՆՅԱՆ